

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՁԵՌՆԸ ԵՎ ՆՐԱ «ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՏՈՄԱՐԻ»
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ
Գալստյան Գ. Ա.

Մեր աշխատանքը նվիրված է Հովհաննես Կոզեռնին և վերջինիս «Մեկնութիւն տոմարի...» աշխատությանը: Հովհաննես Կոզեռնը X-XI դարերի անվանի վարդապետ է, որի մասին, ցավոք, շատ քիչ տեղեկություններ են մեզ հասել՝ հակառակ իր համբավին, անհայտ են նաև նրա ծննդյան և մահվան թվականները: Կոզեռնի անվանը առաջին անգամ հանդիպում ենք պատմիչ Արիստակես Լաստիվերցու «Պատմության» մեջ: Կոզեռնի անվան հիշատակության հաջորդ հանգրվանը Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրություն» աշխատությունն է, որտեղ վարդապետը հիշատակվում է մի քանի անգամ տարբեր առիթներով: Կոզեռնի մասին տեղեկություններ կան նաև Ասողիկի և Սմբատ Գունդստարի աշխատություններում: Գիտենք, որ անվանի վարդապետը գրել է «Հավատոյ գիր», որը մեզ չի հասել, «Ծոպատկի բացատրություն», «Տեսիլ» աշխատությունը, որի հեղինակությունը հետագայում վերագրվեց XII դարի կեսերին ապրած մի հեղինակի: Պետրոս Գետադարձ կաթողիկոսի պատվերով գրել է նաև «Բագրատունյաց պատմություն», որը կրկին մեզ չի հասել: Կոզեռնի մատենագրության գոհարներից է նրա «Մեկնութիւն տոմարի, զոր արարեալ է Յոհաննիսի վարդապետի, զոր մականունն Կոզեռն կոչեցեալ» աշխատությունը:

Բանալի բառեր. Հովհաննես Կոզեռն, մեկնություն, տոմար, կրկնակ, վերադիր, Է-երեակ:

Հայոց տոմարագիտության պատմության մեջ շատ կարևոր տեղ ունի Հովհաննես Կոզեռնը: Վերջինս Ժ.-ԺԱ. դդ. անվանի վարդապետ է, որի ծննդյան և մահվան թվականները հայտնի չեն: Չնայած իր ունեցած մեծ համբավին՝ կենսագրական շատ քիչ տեղեկություններ են հայտնի

նրա մասին: Եվ մինչև ներկայացնելը, թե ինչ սկզբնաղբյուրներում և ինչ առիթներով է հիշատակվում անվանի վարդապետի անունը, նշենք նրա բավականին հետաքրքիր մականվան՝ «Կոզեռն» բառի բացատրությունները: Այսպես, «Կոզեռն» մականվան նշանակությունը Հ. Քյուրտյանի համար անհասկանալի է մնում, իսկ ըստ Հրաչյա Աճառյանի «Հայերենի արմատական բառարան»-ի՝ այն նշանակում է *«մանուկ, երեխա»*: Իսկ Ղևոնդ Ալիշանը իր «Հայապատում» աշխատության մեջ «Կոզեռն» մականունը բացատրում է *«ուղտի ձագ»*: Բառի նմանատիպ բացատրությանն ենք հանդիպում նաև Գրաբարի բառարանում և Է. Աղայանի կազմած «Արդի հայերենի բացատրական բառարան»-ում:

Տոմարագետի մասին հիշատակություններ կան Արիստակես Լաստիվերցու (ԺԱ. դար) «Պատմութիւն», Մատթեոս Ուռհայեցու (ԺԱ.–ԺԲ. դարեր) և Սամուել Անեցու (ԺԲ. դար) «Ժամանակագրութիւն» աշխատություններում, Սմբատ Սպարապետի (ԺԳ. դար) «Տարեգիրք» ժողովածուում:

ա) Հովհաննես Կոզեռնի վերաբերյալ առաջին հիշատակությանը հանդիպում ենք Արիստակես Լաստիվերցու «Պատմութիւն» աշխատության մեջ, որտեղ մասնավորապես կարդում ենք. *«Եւ Յովհաննէս ի նոյն գաւառէ, զոր վերադիր անուամբ Կոզեռն կոչէին, որ զհաւատոյ գիրսն գրեաց»*:

Անվանի վարդապետի մասին հաջորդ հիշատակումները գտնվում են Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» մեջ: Եվ այդ հիշատակումները կատարվում են ոչ թե մեկ, այլ մի քանի առիթներով:

բ) Մատթեոս Ուռհայեցու մոտ Կոզեռնի անվան վերաբերյալ առաջին հիշատակությունը կապված է Բյուզանդիայի Բարսեղ (Վասիլ) կայսեր պահանջով «Ծռագատկի մեկնություն» գրելու հետ: Ըստ նշյալ աշխատության՝ հայոց 455 թ., այսինքն՝ 1006-1007 թթ., Կ. Պոլսում մեծ հուզում տեղի ունեցավ, որովհետև հույները շփոթեցին Չատկի օրը և չնշեցին Հարության տոնը: Հույն վարդապետները նենգաբար ընդունեցին Իրիոնի անստույգ և պատիւ տոմարը՝ Չատկի օրը տեղափոխելով 8 օր առաջ՝ Ծաղկազարդի օրը: Վասիլ կայսրը, չբավարարվելով հունաց իմաստունների տված պատասխաններով, ուզեց իմանալ հայոց վարդապետների խոսքը, որոնց մասին նախկինում շատ էր լսել: Նա անվանաբար գիտեր Հովսեփ Ընծայեցուն, ինչպես նաև Հովհաննես Կոզեռնին: Կայսրը խնդրում է Հովհաննեսին, որ իր մոտ՝ Պոլիս, ուղարկի վարդապետներին, սակայն նրանք չեն համաձայնում գնալ: Եվ դրա

փոխարեն Կոզեռնը գրում է «Ծոազատկի բացատրություն» և ուղարկում է կայսրին: Այստեղ վարդապետը, հիմնվելով Անանիա Շիրակացու մեկնությունների վրա, որը կատարել էր իր «Զատկի ճառ»-ում, հիմնավորում է հայոց եկեղեցու ուղղափառ դիրքորոշումը՝ մերժելով Իրիոնի գատկացուցակը: Անանիա Շիրակացին, խոսելով Իրիոնի մասին, քննադատում է նրան, քանզի նա Լուսնի լրման 19-ամյա պարբերաշրջանի առաջին տարի է համարում ապիլի 6 = նիսան 16 լրման տարին, որը 19-ամյա պարբերաշրջանի 18-րդ տարին էր: Նա ապրիլի 6-ը դարձնում է ապրիլի 5, և այն տարիներին, երբ ապրիլի 5-ը համապատասխանում էր շաբաթ օրվան, կիրակի օրը՝ ապրիլի 6-ին, Զատիկ է հայտարարում: Եվ այդ տարիներին Քրիստոսի հրաշափառ Հարության օրը համապատասխանում էր տիրասպան հրեաների Զատկի հետ, ինչն արգելվել էր առաջին տիեզերածողովում: Իր 532-ամյա պարբերաշրջանում 4 անգամ հանդիպում ենք այդպիսի գատիկներ՝ առաջին 3-ը 95 տարին մեկ, իսկ վերջինը դրանից 247 տարի հետո՝ հենց 1007 թվականին, հենց որի պատճառով էլ Հովհաննես Կոզեռնը գրում և կայսրին է ուղարկում իր «Ծոազատկի բացատրությունը»: Պրոֆ. Ռ. Վարդանյանը հիմնավորում է, որ 1007 թ. Կոզեռնը գրել է իր «Մեկնութիւն տոմարի» աշխատությունը, որի մի մասը իր անվամբ, առկա է ՄՄ Հ^մ 1999 գրչագրում, և այս «Ծոազատկի բացատրությունը» մաս է կազմել այդ մեկնության, ինչի մասին մեզ հիշատակում է Մատթեոս Ուռհայեցին, և որը մեզ չի հասել: Այլ խոսքով՝ անվանի գիտնականը փաստում է, որ Կոզեռնի գրած տոմարական ժողովածուն, որը հայտնի է «Մեկնութիւն տոմարի» անվամբ, իր մեջ պարունակել է ոչ միայն ՄՄ Հ^մ 1999 թվահամարի գրչագրում առկա բնագիրը, որն ավելի քան 100 տարի հետո է ընդօրինակվել, այլև իր խմբագրած «Պատճենը» և Ծոազատկի մասին գրած նամակ-մեկնությունը: Եվ «Մեկնութիւն տոմարի» երկում, որը 1126 թ. ընդօրինակություն է, պահպանվել են հնագույն «Պատճեն տոմարի» կանոնները, այն է՝ աստղագիտական երևույթությունների, արևային տարվա եղանակների և տոների հայոց անշարժ տոմարի ամիսները, հաստատունները և նահանջի միջոցով դրանք գտնելու եղանակը:

զ) Հովհաննես Կոզեռնի վերաբերյալ մյուս տեղեկությունը վերաբերում է 1021/1022 թթ. Պետրոս Գետադարձ (1019-1058 թթ.) կաթողիկոսի հետ Տրապիզոնում ջրօրհների արարողություն կատարելուն:

դ) Հաջորդ ակնարկը կապված է 1030 և 1036-37 թթ. տեղի ունեցած արևի խավարումների հետ: Այդ կապակցությամբ ձեռագրերում պահպանվել է Կոզեռնին վերագրվող «Տեսիլ» հորինվածքը, որը մեզ տեղեկացնում է, թե ահաբեկված իշխանները և պատվական մարդիկ դիմել են Սևանի՝ իր սրբությամբ հռչակված Հովհաննես Կոզեռն վարդապետին՝ իբրև *«աստուածապաշտ և հրեշտակակրոն, առաքելական և մարգարեական գրքերի քաջատեղյակ մարդու»* իմանալու համար, թե ինչ նշան է այս երևույթը: Ըստ «Տեսիլ» հորինվածքի՝ նա խավարումները կապել է մարդկանց վատ վարքի հետ, որոնք հեռացել էին Աստծուց: Հովհաննես Կոզեռն վարդապետը դիմում է այդ մարդկանց՝ ասելով. *«Որդեա՛կք, ահա յայսմ հետէ ի հակառակութենէ իշխանացն եւ յառաջնորդացն, փակելոց են դրունք եկեղեցեաց, եւ վերանայ սրբութեան կարգ յամ եկեղեցեաց եւ յաղագս արծաթասիրութեան տան ձեռնադրութիւն բազում անարժանից եւ զամ պեղծս ածեն ի կարգ քահանայութեան. եւ յայն ժամ պատարագի Քրիստոս ի ձեռս անարժանից. եւ բազումք անարժան հաղորդին ի նոցանէ՝ ոչ եթէ ի փրկութիւն, այլ ի դատապարտութիւն եւ ի կորուստ հոգւոց նոցա. եւ ուր ուրեք գտանի ճշմարիտ պատարագող Քրիստոսի սուրբ խորհրդոյն յազգս ազգս...»*: Ուշագրավ է նաև նշել, որ Նիկողայոս Մառը, Ղևոնդ Ալիշանն ու Աշոտ Հովհաննիսյանը կարծում են, որ «Տեսիլ» աշխատությունը Կոզեռնին չի պատկանում, այլ շարադրված է քաղաքական իրավիճակի թելադրանքով, ուր կարևորվում է լատիներից սպասվող օգնության գաղափարը: Մակայն Հակոբ Քյոսեյանը կարծում է, որ տեսիլքի՝ մեզ չհասած ենթադրվող նախնական տարբերակը հնարավոր է շարադրված է եղել հայ բյուզանդասեր կուսակցության քաղաքական ակնկալությունների հաշվառումով:

ե) Հովհաննես Կոզեռնի անունը վկայված ենք գտնում նաև Սմբատ Սպարապետի «Տարեգրքում»: Այն կապված է Պետրոս Ա. Գետադարձ (1019-1058 թթ.) կաթողիկոսի հետ Տրապիզոնում ջրօրհների ծեսին մասնակցելուն:

զ) Հովհաննես Կոզեռնի մասին հիշատակություն գտել ենք նաև Սամուել Անեցու «Ժամանակագրություն» աշխատության մեջ: Այն կապված է 1037 թ. տեղի ունեցած արևի խավարման հետ. *«Խաւարեցաւ արեգակն ախրալի եւ եղել սոյլ սաստիկ եւ սգացաւ մեծ վարդապետն Կոզեռն Յովհաննես եւ ասաց զեղծումն կարգաւորաց, եւ զաւեր աշխարհիս յանարժան քահանայից»*:

Այսպես, մատենագրական վկայությունները օգնում են ճանաչելու Հովհաննես Կոզեռնին ոչ միայն որպես տոմարագետի, այլ նաև որպես բարձրապատիվ անձի և իր ժամանակաշրջանում հավասարը չունեցող գիտնականի:

Հակոբ Քյոսեյանը իրավացիորեն նշում է, որ Հովհաննես Կոզեռն Տարոնեցին ունեցել է ոչ միայն գործնական աստվածաբանությանը վերաբերող գիտելիքներ, այլև Աստվածաշունչը մեկնելու շնորհ: Դրա փայլուն ապացույցն են նրա հեղինակած և ձեռագրերում պահպանված երեք աշխատությունները, որոնցից «առաջինը Ծննդոց գրքի մեկնությունն է, երկրորդը՝ Պայծառակերպության տոնի խորհրդաբանական բացատրությունը, իսկ երրորդը խրատ է՝ համեմված ճգնական կյանքը կազմակերպող օգտաշահ մտածումներով»: Ուռհայեցու հավաստմամբ՝ Կոզեռնը հեղինակել է «Գիր հաւատոյ» և «Պատմութիւն տանն Բագրատունեաց» աշխատությունները, որոնք չեն պահպանվել: Հ. Քյուրտյանը նշում է, որ Կոզեռնը մահացել և թաղվել է հավանաբար Երևանի Կոզեռ կոչվող վայրում: Այսպես, ավարտելով մեր խոսքը նշանավոր վարդապետ Հովհաննես Կոզեռնի կենսագրական և ստեղծագործական տեղեկությունների վերաբերյալ՝ անցում կատարենք նրա «Մեկնութիւն տոմարի» աշխատության մեջ առկա տոմարական հարցերի քննարկմանը:

Ինչպես ասացինք, Հովհաննես Կոզեռնը հեղինակել է «Մեկնութիւն տոմարի» շատ կարևոր աշխատությունը, որը հայտնի է հետևյալ խորագրով՝ «Մեկնութիւն տոմարի գոր արարեալ է Յոհաննիսի վարդապետի, գոր մականունն Կոզեռն կոչեցեալ»: Մեզ հայտնի է այս մեկնության հրատարակված 2 տարբերակ, որոնք հրատարակել են Հ. Քյուրտյանը և Ջ. Էյնաթյանը: Հրատարակելիս Քյուրտյանն օգտվել է իր ձեռքի տակ եղած ԺԷ. դարի մի ձեռագրից: Իսկ Ջ. Էյնաթյանը Հովհաննես Կոզեռնի աշխատության բնագրի համար ընտրել և համեմատել է հետևյալ ձեռագրերը՝ ՄՄ Հ^մ 2292, 1999, 2001, 3587, 10200, 7040 և Հ. Քյուրտյանի օգտագործած ձեռագիրը: Իսկ Կոզեռնի «Չպատճառ բերելեաց կամ ի բաց տանելեաց թուականին» վերնագրով աշխատության համար, որը շարադրված է «Մեկնութիւն տոմարի»-ից հետո, Ջ. Էյնաթյանը օգտագործել է հետևյալ 4 ձեռագրերը՝ ՄՄ Հ^մ 1973, 6017, 7098 և Հ. Քյուրտյանի օգտագործած ձեռագիրը:

Դժվար է ասել, թե Ջ. Էյնաթյանի հրատարակած «Մեկնութիւն տոմարի գոր արարեալ է Յոհաննիսի վարդապետի, գոր մականունն Կոզեռն կոչեցեալ» բնագիրը քանի կանոն ունի, որովհետև վերջինս

գրված չէ հարցուպատասխանիքի ձևով և հիմնականում կանոնները առանձնացված չեն: Ասվածը պարզ դարձնելու համար ասենք, որ, օրինակ, կրկնակի համար բնագրում կա 2 կանոն, վերադրի համար՝ 3, յոթներյակի համար՝ 2 կանոն: Եթե առանձնաբար հաշվենք կանոնները, ապա դրանց ընդհանուր քանակը կլինի 18, իսկ «Զպատճառ բերելեաց կամ ի բաց տանելեաց թուականին» վերնագրով աշխատությունը՝ կունենա 10 կանոն: Նկատելի է, որ այս 2 աշխատությունները նույն Հայոց մեծ թվականի հարցերին են նվիրված: Նշենք նաև, որ այս երկուսը մեկը մյուսից անջատված մաս են կամ գրվել են տարբեր առիթներով: Հետաքրքրական է, որ Քյուրտյանը սկզբում դրել է «...Զպատճառ վերայ բերելեաց»-ը՝ հիմք ընդունելով իր օգտագործած բնագիրը, իսկ Էյնթյանը՝ հակառակը:

Կա կարծիք, ըստ որի՝ Անանիա Շիրակացուց հետո ապրած շատ հեղինակներ (տոմարագետներ) օգտվել են վերջինիս աշխատություններից, ընդօրինակել են և նույնիսկ «տառացի» արտագրել: Այդ պատճառով բերենք մի քանի փաստ՝ ի համեմատություն Անանիա Շիրակացու «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» երկի:

Նշենք, որ ի տարբերություն Անանիա Շիրակացու հեղինակած «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» տոմարի մեկնողական երկի՝ Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» աշխատությունը գրված չէ հարցուպատասխանիքի ձևով: Ջ. Էյնթյանի հրատարակած բնագրում Կոզեռնի մեկնության մեջ բացակայում են *«զի՞նչ է ամիս, զի՞նչ են կիսակք, զի՞նչ է նահանջ, զի՞նչ է տասնիններեակ, զի՞նչ է, որ ասէ՝ «կա՛լ թիւ մի», զի՞նչ է, որ ասէ՝ «ԽԵ. (45) հանապազ ասէ կալ Լուսնին», զի՞նչ է, որ ասէ՝ «կա՛լ ԺԳ. (13) եւ զնահանջն», զի՞նչ է, որ ասէ՝ «կալ զվերադրին, երթ առանց կիսակի», զի՞նչ է՝ կալ ԽԶ (46), զի՞նչ է, որ ասէ, թէ քան զհասարակածն աւելի է ի նոյն ամսեան է լրումն, եւ թէ՛ պակաս է՝ յառաջին ամիսն ելանէ», որոնք առկա են «Մեկնութիւն տոմարի Անդրեասայ» աշխատության մեջ: Եվ ինչպես կներկայացնենք ներքոնշյալում, Հովհաննես Կոզեռնը խմբագրել է որոշ կանոններ, ինչպիսիք են, օրինակ, Գարնանամուտի և Աւետիք այլազգեաց կանոնները: Մեր բերած հատվածը ապացույցն է այն բանի, որ ինչքան էլ խոսենք, որ Հովհաննես Կոզեռնը ամբողջությամբ, նույնիսկ բառ առ բառ արտագրել է և ընդօրինակել է Շիրակացուն, այնքան էլ այնպես չէ: Մենք կասկածի տակ չենք դնում այն, որ Հովհաննես Կոզեռնը օգտվել է Շիրակացուց, բայց համեմատելով այս երկու մեկնությունները՝ հստակորեն կարող ենք նշել, որ 2 բնագրերն էլ ունեն*

առանձնահատկություններ, բայց միևնույն ժամանակ կան խնդիրներ, որ 2 մեկնություններում էլ արծարծված են:

Ասենք, որ իր մեկնության սկզբում Հովհաննես Կոզեռնը բացատրում է Ծ-եակ թվականի առաջին տարվա համապատասխանությունը հուլյան տոմարի 552/553 թվականին՝ Նավասարդի 1-ը դինաստիական տարբեր թվականներին գուգադրելով, որոնք միարժեքորեն ցույց են տալիս 552 թվականը: Իսկ Քրիստոսի Ծննդյան ամիս-ամսաթվի՝ Արաց 30-ի քննությամբ՝ վկայում է Հայոց թվականության 2-րդ հատվածի՝ 553 թվականին համապատասխանելու մասին: Բերենք նշյալ հատվածը. «Արդ, վասն զի յԱրաց ամսոյ ի Լնն (30) հանդիպեցաւ դնել զգիր թուականութեան Հայոց ազգիս ի ձեռն Անանիայ Շիրակացոյն, Ժ.երորդ (10) ամի աթոռակալութեան Յոհաննիսի Հայոց կաթողիկոսի, որ ԻԳ. (23) թիւ էր հայրապետացն ի սրբոյն Գրիգորէ եւ ԻԵ. (25) ամին Յուստիանոսի կայսեր, ի հիմնարկութեան մեծի եկեղեցոյն սրբոյն Սովիայ, եւ ի ԻԵ. (25) ամին Խոսրովու Պարսից արքային. արդ, յայս տարւոջ յորում զթուականն եղին, ԸՋՀՁ. (5976) ամ էր յԱդանայ մինչեւ ի Հայ թուականն: Եւ ի ծննդէնէն Քրիստոսի մինչեւ ի սրբոյն Գրիգորի ելն ի Վիրապէն են ամք ՄՀՁ. (276), որ լինի ի ծննդէնէն Քրիստոսի մինչեւ ի հայ թուականն ամք ՇԾԲ. (552)»:

Հովհաննես Կոզեռնն իր մեկնության մեջ այնուհետև անցում է կատարում կրկնակին և ասում, որ Նավասարդ ամիսը կրկնակ չունի: Եվ թէ որն է դրա պատճառը, նա տալիս է հետևյալ պատասխանը. «Նաւասարդի կրկնակ չկայ: Եւ զի նչ է պատճառն. վասն զի շաբաթն Է. (7) օր է, եւ ամիսն՝ Լ. (30): Եւ յորժամ զամսին շաբաթ առնես, լինի Դ. (4) շաբաթ եւ Բ. (2) օր. այն կոչի կրկնակ: Եվ վասն զի Նաւասարդի զիր կրկնակն չառնու զանձամբ, զի Բ. (2) օրն, որ առավելու քան զԴ. (4) շաբաթն, այն յելս ամսոյն լինի»: Մեկնության հաջորդ հատվածում հեղինակը ցույց է տալիս Նավասարդին հաջորդող ամիսների կրկնակների հաշվման կարգը, այսպես. «Վասն այնորիկ Հոռի ամսոյն կրկնակն Բ. (2) լինի մնացեալն ի Նաւասարդոյ: Նոյնպէս եւ Հոռի ամիս զիր կրկնակն, որ ի Նաւասարդէ էառ եւ զիր յաւելուածն, որ լինի Դ. (4) օր, զայն Մահմոյ մատուցանէ: Նոյնպէս եւ զայլսն իմասցիս. զի երթայ ըստ կարգի, մինչեւ լինիցի շաբաթ, ապա ի նմին դառնայ»: Ինչպես նկատելի է բերված հատվածից, Հովհաննես Կոզեռնի կարգած կրկնակի կանոնը չէր տարբերվում Անանիա Շիրակացու կարգած նույնաբնույթ կանոնից: Պարզ է, որ Կոզեռնը այս կանոնը սահմանելիս օգտվել է Անանիա Շիրակացու աշխատությունից:

Մեզ համար մեծ հետաքրքրություն ներկայացրեց նաև Հակոբ Ղրիմեցու կարգած կանոնը կրկնակի վերաբերյալ: Վերջինս իր մեկնության մեջ կրկնակին վերաբերող հատվածում հարցեր է առաջադրում և պատասխանում այդ հարցմունքին: Նրա հարցմունքը վերաբերում է հետևյալ խնդիրներին, թե ի՞նչ է կրկնակը, ինչպե՞ս պիտի այն հաշվել, ինչի՞ համար պիտի կրկնել և թե ինչու՞ պետք է դա կրկնակ կոչել: Հակոբ Ղրիմեցու կարգած կանոնը ունի առանձնահատկություն, որը մենք չենք նկատել մեր թվարկած նախորդ հեղինակների մոտ՝ այն է, թե «վասն էր զանուն կրկնակ ընկալալ»: Դրան անվանի տոմարագետը տալիս է հետևյալ պատասխանը. «...Չորրորդ՝ թե ինչու անունը որպես կրկնակ ընկալվեց, քանի որ բոլոր անունները երեք մասից են բաղկացած՝ իրից (առարկա, նյութ), արվեստից և ձայնից: Եվ իրից, ինչպես ասում ենք «սապատ»¹, քանի որ պարունակում է իր մեջ հաց կամ ուրիշ ինչ-որ բան, «սափոր», քանի որ իր ներսում ունի փոս (ծակ, խորշ), «փակեղ»², քանի որ գլուխը ծածկելու համար է, «կարաս»՝ այստեղ կա ջուր (կայ աստ ջուր) կամ գինի: Ձայնից. թռչունի ճվճվալու պատճառով անվանում ենք «ճնճղուկ» և կոկոռալու պատճառով՝ «ագռավ» և կշկշալու պատճառով՝ «կաշաղակ» և խոսելու պատճառով՝ «խոսող»: Արվեստից, ինչպես հյուսնության համար՝ «հյուսն», ինչպես սարդի՝ ոստայն հյուսելու համար՝ «սարդոստայն», և մեղր պատրաստելու համար՝ «մեղու», և գուրպայի՝ բույն շինելու համար ասում ենք «գուրպարար»³: **Նույնպես և կրկնակի անունը արվեստից ընկալվեց, քանի որ կրկնելով արվեստավորվեց կրկնակի գյուտը**⁴: Այս հատվածում գեղեցիկ կերպով ներկայացվում է կրկնակի անվան խնդիրը, որը առանձնահատկություն է և տարբերվում է նախորդ հեղինակների մեկնություններից:

Հաջորդ խնդիրը, որ քննարկում է Կոզեռնը իր «Մեկնութիւն տոմարի» աշխատության մեջ, վերադրի հարցն է: Նշենք, որ վերադիրը Լուսնի հասակն է տարվա վերջին օրը: Վարդապետը նշում է, թե ինչու և որտեղից ամեն տարի 11 պիտի գումարել. բերենք հատվածը. «...որովհետև ամեն տարի լուսինը իր պտույտը 11 օր ավելի շուտ է

¹ «Սապատ» նշանակում է 1. կողով, 2. արկղ:

² «Փակեղն» նշանակում է 1. գլխի փաթաթան, փաթթոց, 2. կանանց և կույսերի գլխի ծածկոց:

³ «Գուրպարար» նշանակում է «այն թռչունը, որն իւր թաթմանի ձեւով բոյնը կախում է ծառի ճիւղերից»:

⁴ Հատվածը գրաբարից աշխարհաբարի ենք վերածել մենք:

կատարում, քան արեգակը: Քանի որ արարչագործության չորրորդ օրը առավոտյան Աստված ստեղծեց Արեգակը, իսկ երեկոյան՝ Լուսինը: Եվ Լուսնի ստեղծման ժամանակ (Լուսնի ընթացքից) 11 մաս պակասում էր Արեգակի ընթացքից: Եվ այն մեկ ամսում լինում է 11 ժամ, իսկ մեկ տարում՝ 11 օր: Եվ հենց դա է կոչվում վերադիր: Այժմ երբ կամենաս վերադիրը հաշվել, անցած տարիների վերադիրները պիտի ամեն տարի հաշվել 11: Այս է գումարման պատճառը»: Հետո բացատրում է, թե ինչու 19-ամյակի վերջին տարում պետք է ավելացնել 12 և ոչ թե 11: «...Պատճառն այն է, որ Ապրիլի 13-ի լրման տարուց, որը բոլորակի սկիզբն է՝ հաշվման իմաստով, մինչև մարտի 25՝ բոլորակի վերջը, ամեն տարի մնացած են լինում մասնիկներ (մասունքներ): Եվ դրանք ժողովվում, կուտակվում են, և ամբողջ 19-երյակում լինում է 361 մասնիկ, որ լինում են 30-մասնյա 12 ժամ և մնում է մի մասնիկ... Այդ է պատճառը, որ 19-ամյակի վերջին տարում պետք է ավելացնել 12: Եվ այդպես պետք է վարվել, որ վերադիրը անսխալ լինի: Իսկ երբ ասում է «Ը (8) հանապազ երթ...», նրա համար, որ նախքան Հայոց թվականը դնելը առաջին տարում վերադիրը 22 էր, իսկ թվականը դնելու ժամանակ՝ 3: Եվ երբ գումարում ես, ստացվում է 11: Եվ հին վերադիրի վրա բերելով՝ ստացվում է 22, իսկ միավորելով 11-ն ու 22-ը, ստացվում է 33: Հանելով հին վերադիրը՝ 22 և նոր վերադիրը՝ 3, մնում է 8: Եվ այս պատճառով է, որ ասվում է «Ը (8) հանապազ երթ...»:

Ի մի բերելով Հովհաննես Կոզեռն Տարոնացի վարդապետի կարգած կանոնները վերադիրի մասին՝ փաստենք, որ նա սկզբում չի բացատրում, թե ինչ է վերադիրը և միանգամից անցում է կատարում «ամեն տարի 11 գումարելու» կանոնի մեկնությանը: Իրենից առաջ հայտնի տոմարագետները արդեն անդրադարձել էին վերադիր հասկացության բացատրությանը. գուցե հենց դա է պատճառը, որ նա միանգամից անցում է կատարում ուրիշ հարցի սահմանմանը: Որպես ընդհանրություն՝ նշենք, որ Շիրակացու սահմանած «Դարձեալ՝ զմետասան աւուրսն, գոր Արեգակը աւելի ընթանայ, քան զԼուսինն, վերադիր կոչեցին...» միտքը ձևակերպված ենք տեսնում նաև Հովհաննես Կոզեռնի մոտ:

Հարկավոր է նշել, որ անվանի տոմարագետ պրոֆ. Ռ. Վարդանյանի ուսումնասիրությունները հանգեցրել են այն իրողության բացահայտմանը, որ Անանիա Շիրակացին ՇԼԲ-ամյա Չատկացուցակներ է ստեղծել և՛ հուլյան, և՛ հայոց տոմարներով: Պետք է

⁵ Հատվածը գրաբարից աշխարհաբարի ենք վերածել մենք:

գիտենալ, որ ներկա 552 թվականի դեկտեմբերի 31-ին Լուսինը եղել է 30 օրական (այսինքն՝ վերադադրել 0 է), որն էլ դարձել է հաջորդ՝ 553 թվականի կամ այլ կերպ ասած՝ Շ-եակ առաջին թվականի վերադիրը: Հուլյան տոմարում վերադիրներն ունեն հաստատուն արժեք յուրաքանչյուր 19-ամյակում՝ տարիների կտրվածքով, և ամեն 19 տարին մեկ կրկնվում են նույնությամբ, այսինքն՝ հուլյան տոմարում վերադիրների համակարգն ունի 19-ամյա պարբերականություն: Հարկ է նշել նաև, որ Անանիա Շիրակացին Շ-եակի հռոմեացոց շարքը կազմելիս օգտվել է հռոմեական փոքր կամ հռոմեա-բյուզանդական վերադիրների համակարգից: Մեծանուն տոմարագետ Անանիա Շիրակացին թեև հնգյակի ու վեցյակի արժեքները դրել է ապրիլի 2-ի լրման տարուց (ներկա 554 թվական), բայց վերադիրների համակարգն սկսել է 19-երեակի առաջին տարուց, այն է՝ ապրիլի 4-ի լրման տարուց (ներկա 562 թվական). այն Շ-եակի հաշվման իմաստով 10-րդ տարին էր: Այստեղ վերադիր արժեքը Թ (9) է: Շիրակացին ամեն հաջորդ տարուն ավելացրել է 11, իսկ 19-երեակի 10-րդ տարում (ներկա 571 թվական) ավելացրել է 12: Նշյալ տարին Շ-եակի հաշվման իմաստով վերջին տարին էր: Շ-եակի՝ հաշվման իմաստով վերջին տարում վերադիր արժեքը մեկով ավելացնելն ուներ կարևոր պատճառ և նպատակ, այն է՝ արևային և լուսնային տարիների հավասարվելը:

Իսկ ինչն արդեն վերաբերում է հայոց շարժական տոմարում վերադիրների խնդրին, պետք է արձանագրել, որ վերադիրը հայոց շարքում լուսնի հասակն է հայոց շարժական տոմարի նախորդ տարվա վերջին օրը՝ Աւելեաց 5-ին: Նշենք, որ վերադիրների համակարգն առկա է հայոց «Պատճենների» խմբագրություններում: Աւելեաց 5-ին Լուսինը եղել է Գ. (3) օրական, որը դարձել է հայոց մեկ թվականի վերադիրը: Ի տարբերություն հուլյան տոմարի վերադիրների շարքի՝ հայոց շարժական տոմարում վերադիրների համակարգը չունի 19-ամյա պարբերականություն. սրա պատճառի մասին կխոսենք ստորև: Հենց այդ պատճառով է, որ Անանիա Շիրակացին սահմանել է կանոն, որի համաձայն՝ հայոց թվականը բազմապատկվում է 11-ով, արտադրյալից հանվում է 8 հանապազորդը, ապա նահանջի համարը, հետո պետք է գումարել 19-երեակի համարը, և կստացվի վերադիրը: Վարդանյանը գտնում է, որ հիմնական կանոնից է ածանցվում յուրաքանչյուր նահանջի տարում 10, 19-ամյակի վերջին տարում 12 գումարելու յուրահատկությունը, իսկ եթե նահանջի տարին ու 19-ամյակի վերջին տարին համընկնեն, պետք է գումարել 11: Կարևոր է նաև նշել, որ

վերադիրը ծառայել է նաև միջոց Լուսնի փուլերի հասակը օրվա ճշտությամբ որոշելու համար, որի համար պետք է իմանալ նաև «Ոսկե թիվը»: Իսկ գտնել տարվա «Ոսկե թիվը» նշանակում է, թե տվյալ տարին լուսնի շրջանի կամ Մետոնի հայտնաբերած 19-ամյա պարբերաշրջանի որերոդ տարին է: Նշենք նաև, որ Հայոց մեծ թվականի և Հայոց տոմարի ամիսների 532-ամյա պարբերաշրջանի համար օրացույցներ կազմելիս Շիրակացին օգտագործել է ստորև բերված աղյուսակում զետեղված վերադիրների համակարգը, որը որոշ չափով տարբերվում է վերադիրների մյուս սիստեմներից:

Աղյուսակ 1.

Վերադիրների համակարգ

Ոսկե թվեր	1	2	3	4	5	6	7	8	9	10
Վերադիրներ	Գ	ԺԴ	ԻԵ	Ե	ԺԶ	ԻԷ	Ը	ԺԸ	ԻԹ	Ժ
Ոսկե թվեր	11	12	13	14	15	16	17	18	19	
Վերադիրներ	ԻԱ	Ա	ԺԲ	ԻԳ	Դ	ԺԴ	ԻԵ	Զ	ԺԸ	

Աղյուսակ 1-ի տվյալներից պետք է ենթադրել, որ վերադիրների այս համակարգը կազմված է հաշվի առնելով նահանջ տարիները: Հայոց տոմարում նահանջ տարիների ընթացքում 11-ի փոխարեն վերադիրը 10 է: Եվ հենց այս է պատճառը, որ, ի տարբերություն հուլյան տոմարի վերադիրների սիստեմի, այն չունի 19-ամյա պարբերականություն:

Հաջորդ խնդիրը, որ արծարծում է Հովհաննես Կոզեռնը իր «Մեկնութիւն տոմարի» աշխատության մեջ, Է-երեակի հարցն է:

Նախ ասենք, որ Է-երեակ որոշել նշանակում է գտնել, թե տվյալ օրը շաբաթվա ինչ օր է: Բերենք Հովհաննես Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» աշխատության մեջ առկա հատվածը յոթներյակի մասին. *«Իսկ Է-երեակի մասին, թե ինչու է ասում Գ. (3) գումարի ը կամ Դ. (4) հանի ը, քանի որ նախքան Հայոց թվականը դնելը յոթներյակը Գ. (3) էր, և երբ (Հայոց) թվականը դրեցին, (յոթներյակը) 4 էր: Այսպես. երբ յոթներյակը հաշվես, պետք է Գ. (3) գումարել կամ Դ. (4) հանել, որ յոթներյակը լիանա (լիություն առնի), և դյուրությամբ կգտնվի խնդրելին: Ապա եթե կամենում ես գիտենալ, թե որտեղից է ստացվում յոթներյակը, վերցրու տարվա ՅԿԵ. (365) օրերը, շաբաթները բաժանի ը Է., Է. (7-7) օրերի, տարվա մնացորդները աճում են, մինչև լինի Է. (7), ապա կրկին առաջին*

է դառնում»⁶: Հովհաննէս Կոզեռնը կանոնը բերելիս հիմնականում կրկնում է Անանիա Շիրակացուն:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր օրացուցային համակարգ ունեցել է տարվա յոթներյակը որոշելու կանոն: Հուլյան տոմարով յոթներյակը գտնելու համար պետք է հռոմէնական թվականին ավելացնել 3 (կամ հանել 4), գումարը բաժանել 28-ամյա պարբերաշրջանի վրա և անտեսելով քանորդը՝ վերցնել բաժանումից ստացված մնացորդը: Յոթներյակի հարցի շուրջ պետք է նկատել մի առանձնահատկություն՝ հայոց ու հուլյան տոմարների միջև: Եթե պետք է յոթներյակը որոշել՝ ըստ հայոց տոմարի, ապա պետք է գործողությունից հետո ստացված արդյունքը բաժանել 7-ի, իսկ հուլյան տոմարի դեպքում՝ 28-ի, քանի որ յուրաքանչյուր 4 տարին մեկ նահանջ տարի է: Այդ պատճառով է, որ հուլյան տոմարի պարբերաշրջանը հավասար է շաբաթվա օրերի թվի և նահանջ տարիների պարբերաշրջանի արտադրյալին ($7 \times 4 = 28$):

Պետք է նշել, որ Հայոց տոմարական մատենագրական ժառանգության մեջ մեզ են հասել «Պատճեն տոմարի հայոցի» բազմաթիվ խմբագրություններ, որոնցում հեղինակները տարբեր կանոններով ու միջոցներով որոշել են արևային տարվա եղանակները (Գարնանամուտ, Ամառնամուտ, Ձմեռնամուտ, Աշնանամուտ), երկնային (աստղագիտական) երևույթների (Անկաստեղ, Ելաստեղ) և տոների (Հայտնություն, Տեառնընդառաջ, Ավետումն Աստուածածնի, Վերափոխումն Աստուածածնի, Սուրբ խաչ ևն) ժամանակները՝ հայոց և՛ շարժական, և՛ անշարժ տոմարների ամիս-ամսաթվերով, ինչպես և բազմաթիվ այլ ժողովուրդների, մասնավորաբար հուլյան, անշարժ տոմարներով: Եթե տարվա եղանակները, տոների անվանումները որոշակիորեն հասկանալի ու ըմբռնելի հասկացություններ են, ապա **Անկաստեղ** ու **Ելաստեղ** տոմարական եզրույթները հիմնականում մանրագնին քննության առարկա չեն դարձել կամ էլ պարզապես հասկացվել են իբրև որևէ աստղի արեգակնային անկումը կամ արեգակնային ամբարձումը՝ ծագումը, ելքը: Եվ այս շատ կարևոր խնդրին է նվիրված Գ. Միմոնյանի ծավալուն հոդվածը, որը կարծես նոր շունչ է տալիս նշյալ եզրույթներին և դրանք դիտարկում խորության մեջ և համակողմանիորեն: Այս խնդրին մեր անդրադարձը չպետք է տարօրինակ թվա, քանզի Անկաստեղի և Ելաստեղի վերաբերյալ կանոնի ենք առնչվում Հովհաննէս Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» գրվածքում:

⁶ Հատվածը գրաբարից աշխարհաբարի ենք վերածել մենք:

Վերջինս ներկայացնում է հետևյալ կանոնը. «Իսկ վասն անկաստեղն, զի ասէ «Ը. (8) ի վերայ նահանջի», վասն զի ի դնել թուականին անկաստեղն ի Մարերի Թ. (9) (Պրոֆ. Ռ. Վարդանյանը «Մարերի Թ»-ն (9) ուղղել է Մարերի Ը. (8)), վասն այնորիկ պարտ է Ը. (8) ի վերայ, զի ամիսն զլիութիւն արցէ: Նոյսէս եւ ի Մարգացի ԺԹ. (19) (Պրոֆ. Ռ. Վարդանյանը «Մարգաց ԺԹ»-ն (19) ուղղել է Մարգաց ԺԸ. (18)) էր ելաստողն, վասն այնորիկ ԺԸ. (18) ի վերայ պիտի ածել, զի ամիսն զլիութիւն արցէ եւ դիրաւ գտանի ինդրելին»: Ինչպես նշել ենք բազմիցս, Հովհաննէս Կոզեռնը իր սահմանումները հիմնականում վերցրել է Անանիա Շիրակացու տոմարական ժողովածուից և Աթանաս Տարոնացու «Պատճենից», որտեղ հաստատուն թվերը հնարավորություն են տվել Ե-եակի առաջին քառամյակի կտրվածքով և Հայոց մեծ թվականի նահանջներով որոշել Հայոց շարժական տոմարի ամիս-ամսաթվերը՝ ըստ տարվա եղանակների և աստղագիտական երևույթների: Հարկ է ընդգծել նաև, որ վաղ շրջանի տոմարագետները, որոնց թվում և Հովհաննէս Կոզեռնը, վերցրել են Հայոց մեծ թվականի նահանջի թիվը և գումարել հաստատուն թվին, անհրաժեշտության դեպքում հանել 30 և մնացորդով ստացել անշարժ օրերի Հայոց շարժական տոմարի առանձին օրերի և դրանց ամսաշարքի տարիները: Ներկայացնելով մի քանի կարևոր տեղեկություններ անկաստեղի վերաբերյալ՝ նշենք, որ Գ. Սիմոնյանը ներկայացնում է այն վարկածը, որ Մնկաստեղ և Ելաստեղ եզրույթները վերաբերում են ոչ թե ինչ-որ աստղերի (Բույլք-Բագումբ, Շնկան, Ալկիոն) անկմանն ու ծագմանը՝ էլքին, այլ Անկաստղն ու Ելաստղը այդ աստղերի կամ աստղաբույլերի կոնկրետ անվանումներն են: Այս տրամաբանությամբ՝ Անկաստեղը պետք է հասկանալ Անկ կամ Ջանկ անունով աստղի կամ աստեղատան անվանում, իսկ Ելաստղը՝ Ել կամ Եղ անունով աստղի կամ աստեղատան անվանում, ինչպես որ կարելի է հանդիպել տարբեր գրչագրերում կամ մեկնություններում: Եվ քանի որ ուսումնասիրողը հանդիպում է նաև Անկաստղի Ջանկբագմաստեղ հոմանիշին, ապա այս դեպքում վստահորեն կարելի է ասել, որ խոսքը համաստեղության մասին է:

Իր տոմարի մեկնության մեջ Հովհաննէս վարդապետը խոսում է նաև գարնանամուտի և ձմեռնամուտի, աշնանամուտի մասին, անդրադառնում է նաև մի շարք տոների՝ Սուրբ Խաչին, Աստվածածնի տոնին, Հայտնության ամսաթվին, Ջատկի տոնին և նրանց հաստատունների վերլուծությանը: Պետք է նկատել և ուրվագծել, որ Հովհաննէս Կոզեռնը նշյալ տոների ամիս-ամսաթվերը տալիս է հայոց

շարժական տոմարի ամիս-ամսաթվերով՝ ըստ Անանիա Շիրակացու կազմած 532-ամյա զատկացուցակի: Մենք Ջ. Էյնաթյանի հրատարակության մեջ նկատել ենք մի շատ կարևոր բան. Ջատկի լուսնի լրման հատվածում լուսնի լրումը դրված է Մարերի Գ. (3), իսկ Ջատիկը՝ Մարերի ԺԴ. (14): Սակայն լրումը պետք է լինի ոչ թե Մարերի Գ. (3), այլ Մարերի Է. (7): Մեր կարծիքով՝ դա գրչական սխալ է, որովհետև Շ-եակ-ի առաջին տարում Լուսնի լրումը Մարերի Է. (7)-ին է, որը հաստատվում է նաև Շիրակացու զատկացուցակով: Հարկ է նշել, որ բերված երկու մեկնությունները ավարտվում են «Յադագս երից ժամոց»-ով, որի հեղինակը, ըստ Էյնաթյանի, Կոզեռնը չէ: «Յադագս երից ժամոց»-ը ավարտվում է անչափ հետաքրքիր հատվածով, որը սահմանում է տառերի թվային արժեքները: Մանրամասն անդրադարձ չկատարելով մեկնության մեջ առկա բոլոր տոներին, աստղագիտական երևույթներին ու դրանց հաստատուններին՝ կուզենանք այստեղ միանգամից դնել պրոֆ. Ռ. Վարդանյանի վերականգնած Հովհաննես Կոզեռնի «Պատճենի» ամսաշարքը, որը ավելի մատչելի ու կոնկրետ ցույց կտա տոների տոնման ժամանակը:

Աղյուսակ 2.

Հովհաննես Կոզեռնի կարգած «Պատճենի» ամսաշարքը

Հաստատուն թիվ	Անշարժ օրվա անվանումը	Հայոց շարժ. տարվա ամսվա անսաշարք (1-30)	Ներկա թվական
13	Գարնանամուտ	Նաւասարդ	1104-1123
8	Անկաստեղ	Նաւասարդ	904-1023
18	Ելաստեղ	Սահմի	984-1103
14	Ամառնամուտ	Տրէ	1000-1119
6	Աստուածածին	Քաղոց	896-1015
6	Սուրբ Խաչ	Արաց	892-1011
10	Աշնանային	Մեհեկի	996-1115
11	Յիսնակ	Ահկի	992-1111
11	Չմեռային	Մարերի	992-1111
22	Յյատնութեան բարեկենդան	Մարերի	948-1067

30	Յայտնութիւն	Մարերի	917-1036
9	Տեառնընդառաջ	Հրոտից	1001-1120

Նշենք նաև, որ ամսաշարքի աղյուսակի առաջին շարքի թվերի վերին սահմանն է 1004 թվականը, իսկ 2-րդ շարքի ներքին սահմանը՝ 1011 թվականը: Միջին թվականը ստացվում է 1007-ը: Ռ. Վարդանյանը նախապատվությունը տալիս է միջին թվականին՝ ևս մեկ անգամ շեշտելով, որ Կոզեռնը «Ծռագատկի բացատրությունը» գրել է հենց 1007 թվականին, երբ եղել է Շ-եակի առաջին շրջապտույտի վերջին ծռագատիկը:

Նշենք, որ Ռ. Վարդանյանն իր ««Պատճեն տոմարի հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը (6-18-րդ դդ.)» աշխատության մեջ բերում է նաև մի այլ աղյուսակ, որտեղ նշվում են անշարժ տոների, տարվա եղանակների և աստղագիտական երևույթների անվանումները, հաստատունները Շ-եակի առաջին շրջանի առաջին քառամյակում, հաստատունները Նուասարդ 1-ից հետո, հաստատունների փոփոխման ժամանակը և «Պատճենի» կանոնախմբի հեղինակը և ժամանակը: Նկատելի է, որ Հովհաննես Կոզեռնը խմբագրել է Գարնանամուտի և «Աւետիք այլագգեաց»-ի կանոնները: Խոսելով Գարնանամուտի կանոնի մասին՝ նշենք, որ նա 13 հաստատունը դարձրել է 8: Գարնանամուտի կանոնը փոփոխություն կրեց 1004 թվականից, և 13 հաստատունի արժեքը վերածվեց 8-ի: Վերջինիս մեկնությունը տվել է Հովհաննես Կոզեռնը: 13 հաստատունի հետքեր գտնվում են ՄՄ Հ^մ 1973, 3846 և 2001 թվահամարների գրչագրերի «Պատճեններում», որոնք ցույց են տալիս, որ հաշվարկը գալիս է Շ-եակի առաջին շրջապտույտից: Հարկ է նշել նաև, որ ՄՄ Հ^մ 1999 և 3846 թվահամարների գրչագրերի «Պատճեններում» նույնպես առկա է 13 թիվը՝ իր հավելումով, այն է՝ «գաւելիսն հա՛ն», որը հենց նշանակում է 13 հաստատունի վերածումը 8-ի:

Ամբողջացնելով աշխատանքը ասենք, որ 1007 թվականին Հովհաննես Կոզեռնը գրել է «Մեկնութիւն տոմարի» աշխատությունը, որտեղ եղել է իր խմբագրած «Պատճենը»: Այդ երևում է «Յարակայքի» տվյալների վերլուծությունից, Աւետիք այլագգեացի և Գարնանամուտի կանոնների քննությունից, ինչպես և անշարժ օրերի և հայոց շարժական տոմարի ամսաշարքի տվյալներից: Հասկանալի է դառնում Մատթեոս Ուռհայեցու տեղեկությունը Շ-եակի վերջին Ծռագատկի (1007թ.) մեկնության մասին, որը կապվում է Հովհաննես Կոզեռնի և Գևորգ Հնձեցու անունների հետ: Հովհաննես Կոզեռնը, հիմնվելով Անանիա

Շիրակացու Զատկի ճառի վրա, գրել է Ծոազատկի մասին մի գրություն-մեկնություն, որը եղել է «Մեկնութիւն տոմարի»-ում՝ որպէս նրա բաղկացուցիչ մաս: Ծոազատկի թվականը 1007-ն է, ուստի Մատթեոս Ուռհայեցիին անուղղակիորեն տվել է «Մեկնութիւն տոմարի» աշխատության գրման թվականը:

Ամփոփելով նշենք, որ Կոզեռնի «Մեկնութիւն տոմարի» աշխատանքը մերօրյա տոմարագետներին հայտնի միակ մեկնությունն է, որը զերծ է հետագա դարերի ընդմիջարկություններից և կապված է մինչսարկավագյան տոմարական համակարգի հետ: Հավանաբար սա է պատճառը, որ նշյալ մեկնության մասին քիչ է խոսվել և քիչ է ընդօրինակվել՝ ի տարբերություն, օրինակ, Կոզեռնին վերագրվող «Տեսիլ» աշխատության, որի շուրջ 50 ընդօրինակություն է հայտնի: Իսկ քննարկված բնագրի ընդօրինակությունների թիվը չի գերազանցում մեկ տասնյակը:

ОГАННЕС КОЗЕРН И ЕГО ТРУД “ТОЛКОВАНИЕ КАЛЕНДАРЯ”

Галстян Г. А.

Наша работа посвящена литературной деятельности архимандрита Оганнеса Козерна и его труда “Толкование календаря”. Оганес Козерн-известный архимандрит X-XI веков, о котором, к сожалению, до нас дошло очень мало сведений. Неизвестны также даты его рождения и смерти. Имя Козерна впервые упоминается у историка Аристакеса Ластиверци в труде “История”. Следующим упоминанием имени Козерна является труд Матеоса Ураеци “Хронология”, в котором имя архимандрита упоминается несколько раз по разным поводам. Информация о Козерне есть и в трудах Асохика и Смбата Гундстабла. Мы знаем, что известный архимандрит написал “Послание Веры”, которое не дошло до нас, “Объяснение лжепасхи”, труд “Видение”, который впоследствии был приписан автору, жившему в середине XII века. По заказу Католикоса Петроса Гетадарца он написал также “Историю Багратидов”, которая тоже не дошла до нас. Одной из жемчужин библиографии Козерна является его труд “Толкование календаря”.

Ключевые слова: Оганнес Козерн, календарь, толкование, двойственный, исчисление, трёхдневное исчисление.

HOVHANNES KOZERN AND HIS WORK "CALENDAR INTERPRETATION"

Galstyan G. A.

Our work is dedicated to Hovhannes Kozern and his work "Calendar Interpretation". Hovhannes Kozern is a well-known exegete of the X-XI centuries. Despite his fame, little information is preserved, even the dates of his birth and death are unknown. We first meet Kozern's name in the work of historian Aristakes Lastivertzi called "History". Next, Kozern's name is mentioned in the "Chronology" of Matthew Uhrhain, where the exegete is mentioned several times on different occasions. There is also information about Kozern in the works of Asoghik and Smbat Gundstabl. We know that the well-known exegete wrote "The Book of Faith", which did not reach us, "The Explanation of the Tsrazatik", the work "Vision", the reputation of which later was ascribed to an author who lived in the middle of the XII century. At the request of the Catholicos Petros Getadardz, he also wrote the "Bagratunyats Story", which again did not reach us. And one of Kozern's famous works is his "Calendar interpretation...".

Keywords: Hovhannes Kozern, calendar, interpretation, krknak (reiterated), epact, Yotnereak (septenary).

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Անանիա Շիրակացի Տիեզերագիտություն և տոմար: Երևան: Հայպետ հրատ: 1940: 93 էջ:
2. Հակոբ Դրիմեցի Տոմարագիտական աշխատություններ, աշխ` Ջ. Էյնաթյանի: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1987: 394 էջ:
3. Մատթեոս Ուռհայեցի Ժամանակագրություն: Երևան: «Հայաստան» հրատ.: 1973: 376 էջ:
4. Արիստակես Լաստիվերցի «Պատմություն Արիստակեսյ վարդապետի Լաստիվերցոյ»: Վենետիկ, Ս. Ղազար: Տպ. Սրբոյն Ղազարու: 1844: 124 էջ:
5. Սամուել Անեցի և շարունակողներ Ժամանակագրություն, աշխ` Կ. Մաթևոսյանի: Երևան: «Նաիրի» հրատ.: 2014: 504 էջ:
6. Սմբատ Սպարապետ Տարեգիրք: Վենետիկ: 1956: 269 էջ:

7. Անանիա Շիրակացի Մատենագրություն, Թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Աբրահամյանի և Գ. Պետրոսյանի: Երևան: 1979: «Սովետական գրող» հրատ.: 398 էջ:
8. Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան, հ. Բ.: Երևան: «Հայաստան» հրատ.: 1976: 1617 էջ:
9. Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան, հ. Բ.: Երևան: Երևանի համալսարանի հրատ.: 1973: 687 էջ:
10. Բաղայան Հ. Օրացույցի պատմություն: Երևան: ՀՍՍՀ ԳԱ հրատ.: 1970: 562 էջ:
11. Էյնաթյան Ջ. Տիեզերագիտության և տոմարի մեկնություններ: Երևան: «Նաիրի» հրատ.: 2015: 413 էջ:
12. Ղազարեան Ռ. Գրաբարի բառարան, հ. Ա.: Երևան: Երևանի համալսարանի հրատ.: 2000: 685 էջ:
13. Ղևոնդ Ալիշան Հայապատում: Վենետիկ: Ի վանս Ս. Ղազարու: 1901: 357 էջ:
14. Սիմոնյան Գ. Անկաստեղ (Տոմարական մի եզրույթի հետքերով), Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք: Երևան: ԵՊՀ հրատ.: 2017: 35-65 էջեր, 413 էջ:
15. Վարդանյան Ռ. Անանիայի Շիրակացույ (Շիրակունույ) համարողի ՇԼԲ կարգը: Երևան: ԵՊՀ հրատ.: 2015: 264 էջ:
16. Վարդանյան Ռ. «Պատճեն տոմարի հայոց»-ի խմբագրությունների ժամանակի որոշումը (6-18-րդ դդ.): Երևան: ԵՊՀ հրատ.: 2007: 201 էջ:
17. Քիրտեան Յ. Յովհաննես վարդապետ Կոզեռն.// Հանդես ամսօրեայ, 1967:Ա: էջ 1-15:
18. Քյոսեյան Հ. Հովհաննես Կոզեռն Տարոնեցու աստվածաբանական ժառանգությունը// Էջմիածին ամսագիր: 2007: Զ-Է: էջ 56-70:
19. Марр Н. Сказание о каталикосе Петре и ученом Иоанне. СПб. Тип. Имп. Акад. Наук. 1895. 34 с.

Տեղեկություններ հեղինակի մասին

Գալստյան Գ. Ա.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի ուսուցիչ

Երևանի պետական համալսարանի ուսանող

Էլ. փոստ՝ ggalstyan123@gmail.com

Տրվել է խմբագրություն 01.08.2019